

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին  
№ 2820 «05» 2021թ.  
06 AUG 2021  
Կից  Նշում

No 2990 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ  
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի ԹԻՎ 2502-Ա ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի  
ԹԻՎ 2325-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ  
հոդվածները՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի «Հայաստանի  
Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 2502-Ա առ 29  
հունիսի 2021թ. հրամանի հավելվածի Հեմոքսիպարին 2000 անտի-Xa ՄՄ/0,2մլ  
(ԳՀ 19896) դեղի «Փաթեթավորումը, թողարկման ձևը» կետի «10(2x5)-ական  
ապակե ներարակիչներ բլիստերում» բառերը փոխարինել «10(5x2)-ական ապակե  
ներարակիչներ բլիստերում» բառերով:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի  
«Հայաստանի Հանրապետությունում դեղերի վերագրանցման մասին» N 2325-Ա  
առ 16 հունիսի 2021թ. հրամանի հավելվածի Ամբրօքսոլ դեղահատեր 30մգ (ԳՀ  
19917) դեղի «Վերագրանցման ամսաթիվ» կետի «21.07.2020» բառը փոխարինել  
«21.07.2021» բառով:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

05.08.2021

X

ԱՆԱՅԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ստացվ. 06.08.21 ժ. 09<sup>00</sup> Թ